ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գրիտիգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի և Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 21.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2524-2022 գրությամբ «Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.02.2022թ. թիվ 02/16.4/1051-2022 գրության հիման վրա, 14.02.2022թ. թիվ 26/26-1/2524-2022 գրությամբ նախաձեռնել է «Գրիտիգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գրիտիգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գրիտիգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի նախապատմությունը և փաստերը

«Գրիտիգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 7-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4» ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես.

աշխատանքային ռեսուրսների մասով.

Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ:

Ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայկնությունները՝ գնամն առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման մասնակցելու վերաբերյալ:

Մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Գրիտիգ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Գրիտիգ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Գրիտիգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 7-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4» ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես.

աշխատանքային ռեսուրսների մասով.

Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ:

Ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայկնությունները՝ գնամն առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման մասնակցելու վերաբերյալ:

Մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Գրիտիգ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Գրիտիգ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/69 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Նախ, բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 46-րդ կետի պահանջները, որը սահմանում է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանարված անհամապատասխանությունը, այլ ընդամենը վերացական նշել է, որ Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ, ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայկնությունները՝ գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման մասնակցելու վերաբերյալ և մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը:

Նման ձևակերպումից այդպես էլ անհայտ է մնում, թե կոնկրետ ինչը ինչին չի համապատասխանում և ինչ հիմնավորմամբ, և ինչ ուղղությամբ պետք է կատարվի շտկումը:

Գտնում ենք, որ 27.01.2022թ. «Գրիտիգ» ՍՊԸ-ի մասով արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև դրա արդյունքում ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելը, մեղմ ասած, իրավաչափ չէ:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Գրիտիգ» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Հատկանշական է նաև այն փաստը, որ անգամ եթե «Գրիտիգ» ՍՊԸ-ն չներկայացներ շտկմամբ պահանջված աշխատքանյին ռեսուրսին վերաբերող փաստաթղթերը, ապա վերոհիշյալը ըստ Ընթացակարգի հրավերի՝ ոչ թե հայտը մերժելու, այլ վերջինի կողմից հավաքվելիք միավորները նվազեցնելու հիմք էր, բայց որ հայտը մերժելու հիմք:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Գրիտիգ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ

պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել հետևյալը՝

««Գրիտիգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք, «Գրիտիգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 7-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4» ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես.

աշխատանքային ռեսուրսների մասով.

Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ:

Ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայկնությունները՝ գնամն առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման մասնակցելու վերաբերյալ:

Մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Գրիտիգ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ

այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Գրիտիգ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Այսինքն՝ գնահատող հանձնաժողովը գտել է, որ մասնակցի կողմից իրականացված շտկումը կատարվել է ամբողջությամբ, բացառապես՝ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունից, փոխարենը ներկայացվել է մեկ այլ ճարտարագետ-շինարարի տվյալներ, որի կատարած աշխատանքները՝ գնահատող հանձնաժողովի կողմից չեն համարվել նմանատիպ:

Հայտնում ենք Ձեզ.

Առաջին փուլով ներկայացված մասնագետ՝ Աբրահամ Աբրահամյանի մասով հստակ չէր երևում թե կոնկրետ ինչ աշխատանքի տեխ. հսկողություն է իրականացրել /պետք էր ներկայացվեր բացվածք/, քանի որ վերը նշված մասնագետը նախկինում աշխատել էր այլ Ընկերությունում, այդ պատճառով փոխել ենք այլ մասնագետի, որպեսզի հստակ տեղեկացված լինենք մասնագտեի նախկինում կատարված աշխատանքների անվանումներին /կցվում է/:

Շտկման արդյունքում ներկայացված մասնագետը, որ ներկայացվել է ՍՊԸ-ի կողմից, ցանկում նշել ենք Արթուր Սարգսյանից կատարած գործերից տարբերվող աշխատանքներ՝ներկայացնելով ավելի շատ աշխատանքներ, որտեղ ներգրավված է եղել նաև Կարեն Ավետյանը /որտեղ ներգրավված է եղել Արթուր Սարգսյանը/:

Վերը նշվածի վերաբերյալ հայտնել ենք նաև գնահատող հանձնաժողովին /հեռախոսային խոսակցության ժամանակ/:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Գրիտիգ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/69 ընթացակարգի շրջանակներում 18.02.2022թ. ժամը 09:55-ին և 01.03.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը 01.03.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստին, ովքեր պնդել են վերը նշված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.02.2022թ. թիվ 02/16.4/1051-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳՐԻՏԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/69 ընթացակարգի շրջանակներում 18.02.2022թ. ժամը 09:55-ին և 01.03.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրիտիգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<u>աշխատանքային ռեսուրսների մասով.</u>

- Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ:
- Ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայնությունները՝ գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցմանը մասնակցելու վերաբերյալ:

Մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը*:*

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 31.01.2022թ.) շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 27.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել թիվ 1 ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ

այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2524-2022 գրությունը, ՀՀ քաղաքինության կոմիտեի 07.02.2022թ. թիվ 02/16.4/1051-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Գրիտիգ» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց», «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց», «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց», «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» և «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրիտիգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<u>աշխատանքային ռեսուրսների մասով.</u>

- Աբրահամ Աբրահամյանի նախկինում կատարված աշխատանքները չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ չեն հանդիսանում նմանատիպ:

• Ներկայացված չեն մասնագետների հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և նրանց գրավոր համաձայնությունները՝ գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցմանը մասնակցելու վերաբերյալ:

Մեթոդաբանությանը կից ներկայացված չէ փորձարկումների և հսկողության գրաֆիկը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 31.01.2022թ.) շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 27.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել թիվ 1 ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4-1 ենթակետի համաձայն՝

2.4-1 Մասնակցի հայտի գնահատումը իրականացվելու է հետևյալ չափանիշներով և կարգով.

Մասնակցի հայտի գնահատման առավելագույն չափ է սահմանվում 100 միավորը:

	ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1	**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ** (Մասնակցի նմանատիպ փորձառություն, լիցենզիա և լիցենզիայի ներդիր)	բավարար/անբավարար
		ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ
2	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ=** ՏԱ1+ ՏԱ2**)** (Աշխատակազմ (ՏԱ1) և Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2))	70 %
3	**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ)**	30 %

Հ/Հ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների չափանիշներ	Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների գնահատման (չափման) առավելագույն միավորներ	Գնահատման համար սահմանված պահանջներ
1	**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**		
	այդ թվում՝		

1.1	**Մասնակցի նմանատիպ փորձառություն***	բավարար	ՄԱՍՆԱԿՑԻ փորձառությունը գնահատվում է բավարար՝ Հրավերի պահանջով նախատեսված նմանատիպ աշխատանքների (III-րդ կամ III-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի օբյեկտի կառուցման կամ ամբողջական վերակառուցման կամ ամբողջական ուժեղացման) նկատմամբ՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և դրա ներդիրի շրջանակներում մատուցված ծառայության մասով՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 8 տարիների ընթացքում պատշաճ մատուցված ծառայությունների դեպքում
1.2	**Լիցենզիա և լիցենզիայի ներդիր****	բավարար	ՄԱՍՆԱԿԻՑԸ համարվում է բավարար գնահատված՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների առկայությամբ
2	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ) - 100 միավոր**		
	այդ թվում		
2.1	**Աշխատակազմ (ՏԱ1)*****	40 միավոր	ՄԱՍՆԱԿՑԻ աշխատակազմում ներգրավված մասնագիտական ռեսուրսի փորձառությունը և որակավորումը գնահատվում է որակավորումը հավաստող փաստաթղթերի և հրավերով սահմանված **նմանատիպ** օբյեկտների մասով պատշաճ կատարված աշխատանքների մասին ՄԱՍՆԱԿՑԻ գրավոր հավաստող փաստաթղթերի հիման վրա: Աշխատակազմի գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 25 միավոր: Նվազագույն միավորը ստանում է աշխատանքային ռեսուրսների գնահատման արդյունքում բոլոր մասնագետների հրավերով սահմանված նվազագույն պահանջներին բավարարելու դեպքում: **(այդ թվում լրացվում է սույն հրավերի Հավելված N 1.2-ը)**

2.2	**Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)******	60 միավոր	Ծառայության մատուցման գործողությունների համառոտագիր՝ առանձին տեսակի աշխատանքների նկատմամբ ծառայության մատուցման և կատարված աշխատանքների ընդունման նկարագիր **(ներկայացվում է ըստ սույն հրավերի Հավելված N 1.3-ի)**: Ծառայության մատուցման մեթոդաբանությունը պետք է պարունակի նաև ընդհանուր նկարագրական մաս: Սույն մեթոդաբանության ներկայացմամբ գնահատվելու է ընկերության և իր կողմից ներկայացված առանձին խորհրդատուների կարողություններն ու հմտությունները տվյալ ծառայության մատուցման մասով: Այն պետք է լինի հնարավորինս հակիրճ, բովանդակային և արտացոլի մասնագետների համալիր գործողությունները՝ սահմանելով դրանց նպատակներն ու պարտականությունները:
3	**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ)**		
3.1	**Գնային առաջարկ (ԳԱ)*******	100 միավոր	ՄԱՍՆԱԿՑԻ գնային առաջարկը դիտարկվում է ոչ գնային պայմանների գնահատման համատեքստում՝ բացառելով վերջինիս էական ազդեցությունը ընկերությունը հաղթող ճանաչելու գործընթացում:

* ***Մասնակցի նմանատիպ փորձառություն***

Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ, Մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 8 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

Նմանատիպ է համարվում III-րդ կամ III-ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի օբյեկտի կառուցման կամ ամբողջական վերակառուցման կամ ամբողջական ուժեղացման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում:

**Լիցենզիա և լիցենզիայի ներդիր

Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ լիցենզիան և ներդիրները

ԼԻՑԵՆԶԻԱ (<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք)
Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ (<ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 775-Ն որոշում>) *(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*
- **Բնակելի, հասարակական և արտադրական** - **հիդրոտեխնիկական**

-	**Էներգետիկ**

*** ***<u>Աշխատակազմ (ՏԱ1)</u>***

Պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները

Հ/Հ	Մասնագիտական որակավորում	Հիմնական աշխատակազմի նվազագույն թվաքանակ	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
ԼԻՑԵՆԶԻԱ՝ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ			
Շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն մատուցելու համար համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց մասով պահանջվող մասնագետներ			
ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ և ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴԻՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ			
1	**Ճարտարագետ-շինարարի** կամ ճարտարագետի որակավորմամբ բարձրագույն կրթություն	2	նմանատիպ խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ (ճարտարագետ-շինարար)
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴԻՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ			
2	**Ճարտարագետ-էներգետիկի** կամ ճարտարագետի որակավորմամբ բարձրագույն կրթություն	1	Նշված ոլորտում նմանատիպ խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ (ճարտարագետ-էներգետիկ)
3	**Ճարտարագետ-էլեկտրիկի** կամ ճարտարագետի որակավորմամբ բարձրագույն կրթություն	1	Նշված ոլորտում նմանատիպ խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/ կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ (ճարտարագետ-էլեկտրիկ)
ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴԻՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ			
4	**Ճարտարագետ-հիդրոտեխնիկի** կամ ճարտարագետի որակավորմամբ բարձրագույն կրթություն	1	Նշված ոլորտում նմանատիպ խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ (ճարտարագետ-հիդրոտեխնիկ)

Ընդ որում՝

- խորհրդատվական ծառայություն մատուցող պատասխանատու (անձինք) մասնագետները, մրցույթի մասնակցի կողմից գնման հայտը ներկայացվելու պահին մասնակցի լիցենզիայի ներդիրում կամ ներդիրներում ներառված չլինելու պարագայում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում՝

ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող (պայմանագիրն) համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ***30-օրյա ժամկետում***, պետք է ապահովեն ներկայացված մասնագետների ներառումը մասնակցի լիցենզիայի ներդիրներում /ցանկով պահանջվող աշխատակիցները՝ յուրաքանչյուրն իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար, հանդիսանալու են պատասխանատու անձ, ինչի մասին հավաստումը պետք է լինի կատարողական փաստաթղթերի ընդունման ակտերը ստորագրությամբ հաստատելը/,

- ***համապատասխան մասնագիտացումներով պահանջվող աշխատանքային ռեսուրսները չեն համարվում համափոխարինելի և դրանցից որևէ մեկի բացակայությամբ, նվազագույն պահանջները չբավարարելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար,***
- որակավորումը հավաստող փաստաթղթերն են՝ ԲՈՒՀ –ի կողմից շնորհված դիպլոմը, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրերը, լիցենզիաները, արտոնագրերը:

Աղյուսակ N 1

Հ/Հ	Աշխատակիցների /մասնագետների/ կազմը	Մասնագետների որակավորման և փորձառության համառոտ նկարագիրը	Յուրաքանչյուր մասնագետի գնահատման նվազագույն և առավելագույն գնահատականը
1	2	3	4
1	1 Ճարտարագետ-շինարար		**5-8**
2	1 Ճարտարագետ-շինարար		**5-8**
3	1 Ճարտարագետ-էներգետիկ		**5-8**
4	1 Ճարտարագետ-էլեկտրիկ		**5-8**
5	1 Ճարտարագետ-հիդրոտեխնիկ		**5-8**
	Ընդամենը՝		**25-40**

- Մասնակցի կողմից ***Աղյուսակ N 1***-ը լրացվում և հայտով ներկայացվում է սույն հրավերի Հավելված N 1.2-ով սահմանված ձևաչափով:
- Առանձին մասնագետը գնահատվում է նվազագույնը 5 միավոր, եթե համապատասխանում է հրավերով սահմանված նվազագույն պահանջներին՝ այն է՝ ***հայտը ներկայացնելու և դրան նախորդող 8 տարիների ընթացքում կատարել է նմանատիպ առնվազն մեկ օբյեկտի տեխնիկական հսկողություն և/կամ շինարարության իրականացում,*** իսկ դրանից ավել յուրաքանչյուր նմանատիպ օբյեկտի մասով մատուցած տեխնիկական հսկողությունը և/կամ շինարարության իրականացումը ավելացնում է գնահատականը 1 միավորով, որտեղ առավելագույն գնահատականը չի կարող ավել լինել 8 միավորից:
- ***Հայտով ներկայացված բոլոր մասնագետների մասով պետք է կցվեն վերջիններիս գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ***, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ/ առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից:
- **Անկախ Աղյուսակ N 1-ում աշխատակիցների յուրաքանչյուր տողի համար մասնակցի կողմից ներկայացված մասնագետների քանակից, յուրաքանչյուր տողի համար գնահատվում է միայն առաջինը նշված մասնագետը /մյուսները չեն գնահատվում/**

- Եթե ներկայացված մասնագետներից որևէ մեկի մասով հայտը գնահատվում է սահմանված նվազագույն շեմից ցածր՝ հայտն ամբողջությամբ մերժվում է:

****** *<u>Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)</u>***

Աղյուսակ N 2

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նկարագիրը	Նվազագույն և առավելագույն գնահատականը
1	**2**	**3**	**4**
1	Հողային աշխատանքներ		1-60
2	Բետոնային աշխատանքներ		
3	Ամրանային աշխատանքներ		
4	Քարի շարվածք		
5	Հարդարման աշխատանքներ		
6	Ինժեներական ցանցեր		
7	Ասֆալտաբետոն		
8*	Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ		
9	Աշխատանքների ընդունում		

- Մասնակցի կողմից **Աղյուսակ N 2**-ը լրացվում և հայտով ներկայացվում է սույն հրավերի **Հավելված N 1.3-ով** սահմանված ձևաչափով:

Ցանկով սահմանված առանձին տեսակի աշխատանքների նկատմամբ մատուցվող ծառայությունը պետք է արտացոլի ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի, «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված համապատասխան միջոցառումների և նախագծային լուծումների նկատմամբ հսկողական աշխատանքների ընդհանուր նկարագիրը և մեթոդաբանությունը՝ պարտադիր ներառելով տեխնիկական հսկիչի գործողությունները, նպատակը, իրավունքներն ու պարտականությունները: Ներկայացվող մեթոդաբանությունը պետք է արտացոլի տվյալ շինարարական օբյեկտի բնութագրերը և նախագծային առանձնահատկությունները:

*** 8-րդ կետի համար <u>անհրաժեշտ է ներկայացնել</u> նաև ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների առանձին տեսակի աշխատանքների և կոնստրուկցիաների լաբորատոր <u>փորձարկումների պլան</u>: Ընդ որում, յուրաքանչյուր օբյեկտի համար՝ առանձին:**

***** ***Գնային առաջարկ (ԳԱ)***

!!! Մասնակցի գնային առաջարկը գնահատվում է (հաշվարկվում է) հետևյալ բանաձևով՝

ԳԱ= ՆԳ X 100/ԳԳ, որտեղ՝
ԳԱ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,
ՆԳ-ն նվազագույն գինն է,
ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է

Գնահատման ամփոփ աղյուսակ

Հ/Հ	Չափանիշներ	Նվազագույն գնահատական	Առավելագույն գնահատական	Պահանջվող փաստաթղթերի լրակազմի համապատասխանության գնահատում
1	**Համապատասխանության չափանիշներ**			
1.1	Նմանատիպ փորձառություն	-	-	բավարար/անբավարար
1.2	Լիցենզիա և լիցենզիայի ներդիր	-	-	բավարար/անբավարար
2	**Տեխնիկական առաջարկ (ՏԱ)**			
2.1	Աշխատակազմ (ՏԱ1)	25	40	
2.2	Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)	1	60	
3	**Գնային առաջարկ (ԳԱ)**			
3.1	**Գնային առաջարկ (ԳԱ)**	-	100	

!!! ***Գնահատման չափանիշներից մեկի անբավարար կամ նվազագույն շեմից (գնահատականից) ցածր գնահատվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Մասնակցին տրվող գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՄԳ = (ԳԱ X 0.3) + (ՏԱ X 0.7), որտեղ՝
ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,
ԳԱ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,
ՏԱ-ն մասնակցի տեխնիկական առաջարկին տրված միավորն է. **ՏԱ=ՏԱ1+ՏԱ2**

!!! Ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է, ընդ որում, գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ առանձին գնահատում է հայտ ներկայացրած մասնակիցների փաստաթղթերը, իսկ ընդհանուր գնահատականը ձևավորվում է գնահատող բոլոր անդամների գնահատականների միջին թվաբանականի հաշվարկի արդյունքում:

Ընթացակարգի հրավերի հավելված 1.2-ը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը սահմանվել է հետևյալ ձևով՝

Հավելված N 1.2
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին

Հ/Հ	Աշխատակիցների /մասնագետների/ անունը, ազգանունը	Աշխատակիցների /մասնագետների/ կազմը	Մասնագետների որակավորման և փորձառության համառոտ նկարագիրը
1	*2*	*3*	*4*
1		1 ճարտարագետ-շինարար	
2		1 ճարտարագետ-շինարար	
3		1 ճարտարագետ-էներգետիկ	
4		1 ճարտարագետ-էլեկտրիկ	
5		1 ճարտարագետ-հիդրոտեխնիկ	

Կից ներկայացվում է սույն տեղեկանքում նշված մասնագետների

- ***հաստատած գրավոր համաձայնությունները՝ գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ,***
- որակավորումը հավաստող փաստաթղթերի (ԲՈՒՀ–ի կողմից շնորհված դիպլոմ, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրեր, լիցենզիաներ, արտոնագրեր) պատճենները,
- յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ/ առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից:

Ընթացակարգի հրավերի հավելված 1.3-ը՝ ծառայության մատուցման մեթոդաբանության մասին տեղեկանքը սահմանվել է հետևյալ ձևով՝

Հավելված N 1.3
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/4 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*

ծառայության մատուցման մեթոդաբանության մասին

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նկարագիրը
1	2	3
1	Հողային աշխատանքներ	
2	Բետոնային աշխատանքներ	
3	Ամրանային աշխատանքներ	
4	Քարի շարվածք	
5	Հարդարման աշխատանքներ	
6	Ինժեներական ցանցեր	
7	Ասֆալտաբետոն	
8	***Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ***	
9	Աշխատանքների ընդունում	

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4-1 ենթակետով սահմանվում է աշխատանքային ռեսուրսի գնահատմանը ներկայացվող պահանջները և միևնույն ժամանակ սահմանվում է, որ գնահատման չափանիշներից մեկի անբավարար կամ նվազագույն շեմից (գնահատականից) ցածր գնահատվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Միևնույն ժամանակ մասնակիցների կողմից հայտով ներկայացվող հավելված 1.2-ով սահմանված է պահանջվող տեղեկատվությունը:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է շտկումները, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել թիվ 1 ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը, փոխարենը ներկայացվել է մեկ այլ ճարտարագետ-շինարարի, որի կատարած աշխատանքները չեն համարվում նմանատիպ, ընդ որում՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4-1 ենթակետով սահմանվում են նմանատիպ համարվող աշխատանքները:

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունն Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջի նկատմամբ հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Գրիտիգ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն դիտարկմանն, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտում արձանագրելով անհամապատասխանություններ, դրանք մանրամասն չի նկարագրել, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2-2 արձանագրությունը, պարզ է դառնում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մանրամասն նկարագրվել են այն բոլոր անհամապատասխանությունները, որոնց մասով «Գրիտիգ» ՍՊԸ-ն պետք է իրականացներ համապատասխան շտկումներ, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ վերջինիս կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել թիվ 1 ճարտարագետ-շինարարի նմանատիպ փորձառությունը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ գործի քննության նպատակով 01.03.2022թ. ժամը 09:23-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Ընկերության ներկայացուցիչներին պահանջ է ներկայացվել հիմնավորելու Ընթացակարգի հրավերով որպես նախկինում կատարված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին բավարարելու փաստը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից որևէ վերաբերելի ապացույց չի ներկայացվել, որով կհիմնավորվեր Ընկերության կողմից ներկայացված ճարտարագետ-շինարարի Ընթացակարգի հրավերով պահանջվող նմանատիպ փորձառությանը բավարարելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2022թ. թիվ 26/26-1/2524-2022 գրությամբ «Գրիտիգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գրիտիգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**